

# ՍԻՈՆ



Ս. ՏԱԿՈՐԴԱՆԻՑ ՎԱՅՐ ԵՎՅՈՒՄԱՐԵՄ

«Սիոն»، مجلة ارمنية شهرية، دينية، أدبية، ثقافية، للغة والبيان.  
"SION" an Armenian Monthly of Religion, Literature and Philology

## ԲՈՎԱՆԴԱԿԱՆ ԹՐԻՑ

### ԽՄԲԱԳԲԱԿԱՆ

— Վաներն ու դպրեվաները

Ե. Ա. Դ.

Երևան

257

### Ա. ԳՐԱԿԱՆ

— Օտարականը

Ե.

260

### ԿՐԾՆԱԿԱՆ

— Խօնչ եւ այն հիւանդուրիւնը

որոկ կը տառապէր Պօղոս առամիալ

Գ. Ա. ԱՌԱՋԵՅԱՆ

264

### ԲՈՆԱՊՏԵԴՆԱԿԱՆ

— \*

ԹՐՂՄ. Մ. ՄՈՒՆՈՒԿՅԱՆ

268

— \*

» »

269

— Քառեակներ

» »

269

— Հակում՝ մեռած յոյսեռու

ՀՄԱՅԵՆԱԿ ԳՐԱՆԵԱՆ

270

— Հաղորդուրիւն՝ լուսնի տոկ

» »

270

— Աօսուծոյ

Գ. ՃԱՐՏԱՐ

271

— Կ'ուրծէ ապրիլ

» »

271

### ԲՈՆԱՊԻԹԱԿԱՆ

— Վաստագունի բազաւորուրիան տարիները

Ն. ԵՊՈ. ՆՈՎՈՒԱՆ

272

### ԳՐԱԿԱՆ

— Սիխութանայ գրականուրիւն

Գ. ԷՈՐԳ. Ա. ՃԻՆՈՎ. ԵԶԵԿԻԵԼ

273

### ՄԱՏԵՆԱԳԲԱԿԱՆ

— Օտակոնի անփայնեւեն — Նորեկ

Յ. ՕՇԱԿԱՆ

277

### Ո. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՄԵՆ

— Եկեղեցականի - Բենուկանի

281

— Պատօնականի

282

— Չեռնադրուրին

282

Զեկոյց Թաղուած Կիւլգենեան Հիմնուրիուրիան — Հայկական Գործեր

283

Զեկոյց Հ. Բ. Բ. Միուրիան Կեղը. Գառշ. Փաղովի

285

### ՏիրՈՒՒՆԻ

— Արժ. Տ. Հայկազան Աւոգ Քննիլ. Ասկերչեան

286

**ՍԻՌՆ - ի Տարեկան Բաժնեզինն է,  
բոլոր երկիրներու համար, Անգլ. Ելլին 20**

**Redaction of the Armenian Monthly SION**

Armenian Patriarchate,

P. O. B. 4001

Old City - Jerusalem (Jordan)

# ՍԻՐՈՒ

Ա. ՏԱՐԻ - ՆԱՐ ՇԲԶԱՆ

1963

◀ Մեպտեմբեր ▶

թիւ 9

## ԽՄԲԵԳՐԱԿԱՆ

### ՎԱՆՔԵՐՆ ՈՒ ԴՊՐԵՎԱՆՔԵՐԸ

Եթէ պատմական իրողութիւն մը կը նկատուի հինէն ի վեր վանքերու օդտակարութիւնը մեր մէջ, ապահովաբար ա'յն հաստատութիւններով չէ՝ ուրոնց մէջ ապրելէ աւելի չնշած են միայն կարգ մը վանականներ կամ ճղնաւորներ, չունենալով որևէ զեր ի վերոյ նպատակ ծառայիլու ազգին կամ Հայ հանրութեան պէտքերուն, այլ անսնցմով՝ որ իբրև լուսաւորութեան վառարաններ կանցնած՝ միջին և նոր դարերու ընթացքին՝ կըցած են նշուլել Հայութեան համատարած մարմնին զանազան մասերուն վրայ, փոքր ի շատէ փորաւելով դժբախտ ժամանակներու մէջ բանութեամն ու աւերներու, արիւնի ու հալածանքներու երեսէն թանձրացող խաւարը՝

Դպրեվանքերը՝ զարդացումի այն կենդանի փեթակներն էին որ դարերով կատարեցին մեր մէջ իրենց դառն աշխատութիւնները, և փուշ ու տատանկ ըստացնող երկրի մը սարերէն ու ձորերէն հաղիւ դանելով իրենց մեղրին պատրաստութեան ծաղիկը։ Եւ երբ ոչինչ մնացած էր արդէն, ինչպէս դիւրին է տեսնել հին քաղաքական գործունէութեան մը անհուն գոհողութիւններէն, երբ ամէն զէնք վշրուտծ էր Հայ ձեռքերու մէջ, զոնէ չափախուեցաւ վանական մատներու տակ դողդոչող այն զբիչը՝ որ սիստի երաշխաւորէր մասամբ անզրագոյն կեանքի մը պահպանումը։

Հայ ժաղովութզին համար չէ ուրանալ այս ամէնը. հնար չէ նաև անտարբերութեամբ վերաբերուիլ եղերական անցեալի մը նաւարեկութենէն խլուած այն միակ հարստութեան հանդէպ՝ որը հոգեւորական զուրզուրանքներով պահուեցաւ։

Պէտք չենք զդար մի առ մի թուելու՝ թէ ի՞նչ տեւական արդիւնքներ տուին ազգին՝ անոր ներքին կենսականութեանը նուիրուած այդ համեստ ուժերը, և թէ ի՞նչ աւեսուկ անդրաննկութեամբ մը օժանցին դմեզ անօառանալի ժառանգութեան մը համար, որը ո՞չ եկեղեցականին է այսօր և ոչ աշխարհականին, այլ ամբողջ Հայութեան առհասարակ։

Մեր նախնիքներու այդ զործը կը փառաբանենք ո՞չ այն կարճատեսու-

թեամբ թէ անոնք եկեղեցականներ կամ վանականներ էին, այլ ա՛յն մտածումով թէ անոնք ճշմարդիտ զաւակներն եղան Հայ ժողովուրդին, ու առն վ միայն յաջողեցան լուսաւորել՝ ոգեւորել ու ապրեցնել մութի, մորմոքի ու մահացումի մտանուած հաւաքական զոյութիւն մը:

Իսկ հիմա որ կրթական պահանջքները փոխուած են բոլորովին, պիտի բոււի թերեւս: Եատոնց ի վեր կրօնական գասակարդի մը սեփականութիւնն ըլլալէ գաղրած է մտաւոր ու առաջնորդող հեղինակութեան մը զետինը, քանի որ հինցած ըմբռնումները ա՛լ պէտք է խոյս տան նոր զաղափարներու առջևէն. կարելիսութիւն չկայ արդարացնելու եկեղեցական գասակարգի մը առանձնաւ յատուկ կրթութեան պէտքը: Թերեւս աւելցնեն նաև ուրիշներ. ինչ որ կը յիշատակուի անցեալէ՞՝ կրնայ ձիշդ ըլլալ. բայց մենք այդ ամէնը կը համեմուտնք չէնքի մը կառուցման համար կիրարկուած լաստակներու. ըստ այսո՞ւ երբ շինուածը — ազգային զոյութիւնը կ'ուզեն ըսել — ձեռք բերուած իրականութիւն մըն է այսօր, պէտք է վար առնել լաստակները, որոնք չէնքին մտար չըլլալէ զատ՝ խափանարար ու անիմաստ ցցուածութիւն մը միայն կը ցուցադրին աչքերու:

Բազմակողմանի, էապէս քաղաքակրթիչ՝ ու դարու ոզին վեհօրէն պարտազրող պահանջումներու առջև կը խոնարհինք անվերապահ: Մանծ աղամառաւթիւն կը համարինք ապաստանիլ ո՛ր և է խուսափանքի կամ խուճապանքի՝ մերթ տրառւնչ և մերթ խօշիւն հանելով՝ թէ զիտութիւն կամ քաղաքակրթութիւն աւելի կամ պակաս չափերով կը վատնզեն մեր հայրենական հոգեւորականութիւնը, թէ աշխարհական միտքերու հոսանքը կը սպառնայ քանզել մեր համանդ միամառութիւնը, թէ եկեղեցին չկրնալով իբրև թումբ կտսեցնել այդ հեղեղը՝ պիտի տարուի օր մը կործանարար այդ սաստկութենէն ևայն: Աակոյն համոզուած ենք խորապէս թէ ինչ որ սուրբ է ու նուիրական, և հա՛րի է որ մնայ այնպէս, ինչ որ բանաւոր է և աստուածային՝ ու կրնայ ներզորել ուղիղ և առողջ կամքերու, ինչ որ յատուկ բարձրութիւններու հանելով՝ չքնաղ զգացումներու ազդակներով կ'ապնուացնէ մարդը, անիկա տեւական է միշտ, ո՛չ զիտութիւնը կը մաքառի անոր դէմ, ո՛չ քաղաքակրթութիւնը կրնայ ընդունել զայն, և ոչ անկրօն մոլեւանդութիւնը կրնայ զայն կոխոտել, ու անիկա պէտք է ըլլայ ամէն ժամանակի համար մեր կրօնը, մեր բարոյականը, մեր զրօնը, մեր հոգին:

Զէ՞ք կարծեր որ՝ եթէ բովանդակ հայութիւնը դէպի այդ ուզգութիւնը արեգգիմոզ ճամբռւն վրայ կանզնէ իր կրթարանները օթեւանէ օթեւան՝ կարենայ զանել «ծածկուած զանձը». չէ՞ք հաւատար որ եթէ այդ ներշնչումով ուզենք խօսիլ մեր Հովիւին ու զինուորին, մեր մեծերուն ու պատիկներուն, մեր բոլոր զաւակներուն, ընարած ըլլանք Աւետարանի «բարի մաս»ը: Մեզի պէս տառապեալ ժողովուրդի մը համար՝ որ չատ բան կորուսած է արդէն, առարինութիւն մը՝ ամենասուրբ իրաւունք մը՝ կը համարինք պահելն ինչ որ ունիմի, բաւական է որ զիտանք օգտուիլ ապազայի մը խոստումներէն:

Աւգնորէն կը հերքենք ուրեմն այն սխալ կարծիքը՝ որ մեր զոյութեան չէնքին լաստակները կը համարի հայ անցեալին զործունէութեան բոլոր ձար-

տարութիւնը, մինչդեռ ակնարկուած բուն չէնքը որ մեր նախնիքներու հողին արուեստովն է յօրինուած, անոնց ջիլերուն կուռ հիւսուածովն է ոստայնուած, անոնց արիւնի շաղախովն է կարծրացած, այս, բուն այդ չէնքն անգամ վտանգուած է այսօր. ճակատէն վնասուած՝ կորուսեր է իր մեծվայելչութիւնը, տանիքէն խարիլած՝ զոգացեր է իր զմբէթարդ ամրութիւնը, հիմէն սասանած՝ վրիպեր է իր կայքի բարձրութիւնը. — լաստակներու պէտք կայ դարձեալ, նորոգելու համար զայն:

Ո՞վ է որ նախանձախնդիր ըլլալով ազգային կրթութեան ու մշակումի՝ պիտի համարձակի իրեւ մակարոյծ արհամարհել հայ եկեղեցականին չնորհազեղ աճումը մեր կենսական հիւթին վրայ: Չենք հարցներ թէ երբէ՞ն ի վեր դադրած են իրենց հայրերուն ազնուականութեան պատիւ բերելէ ժողովրդասէր՝ պարկեցա՝ ու զործունեայ եկեղեցականներ: Մեր հաւաքական զործարանաւութեան մէջ այնպիսիներու պաշտօնը ո՛չ մէկ ցնցումի, ոչ մէկ ներզեւումի տեղի չէ տուած երբեք:

Եթէ պէտք ունինք հայ հոգեւարականներու՝ որոնցմով հարկ կայ զզուշաւորապէս առաջնորդելու Հայ ժողովուրդին, բանաւոր պիտի չըլլայ նաև յայտարարել՝ թէ յարմար նկատուած անձերու պատահուկան յանձնառութեամբը — որ ատեն անպատրաստ հետեւողներու շարք մըն ալ կը ձեռնայ ինքնին — Հայ եկեղեցականութիւնը կրնայ մնալ իր դերին մէկ՝ բախտացի ընդունելութեան մը թողուած:

Ընդհանուր եկեղեցական կրթութեան համար՝ բացի ուսումնականէն ծրագրի մը զործադրութիւնը անհրաժեշտ չէ՝ արդեօք, որպէսզի բարի ուժերու օժումով մտնէ մէկն այդ ասպարէզը, ըլլայ քահանայ, ըլլայ վարդապետ. իր ստանձնած հոգեւոր լուծին հետ չփառնավարելու համար ո՛ր և է բարոյազեղծ ստորնութիւն. իր հաւատալիքներուն հետ հաշտ պահելու համար ո՛ր և է զիտական ճշմարտութիւն. իր սկզբունքներուն հետ զուզորդելու համար ո՛ր և է ընկերային առողջ վարդապետութիւն. հոգեւոր կեանքի զարթումին և զարգացումին հետ ընթացակցելու համար բարեկարգական ամէն ոգեւորում. մտաւոր հաճոյքներու քաղցրութեան հետ չփոխանակելու համար որ և է նուաստացուցիչ վայելք. զսնողութեան կոչումին հետ չնարմնացնելու համար ո՛ր և է հրապոյր փառասիրութեան. աւետարանական ներշնչումներու հետ չփոխելու համար ո՛ր և է մոլորութեան ողի. չունենալու համար տախէներու որսէն կերակրուելու դիտումով ո՛ր և է աղուէսութիւն. դատաւորական խղճի ամանին մէջ չկրելու համար երկու շափ՝ երկու կշիռ: Եւ դեռ ինչ դասեր կան՝ որոնցմով պէտք ունի ճոխանալու հայ եկեղեցականութիւնը, համաձայն իր դիրքին բարձրութեանն ու բարոյական պատկառանքին՝ զոր կը վայելէ:

Ե. Ա. Դ.

**Ա. ԳՐԱԿԱՆ****ՕՏԱՐԱԿԱՆԸ****ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԱՎԱՐԱՐ**

Դատարանի յարութենէն քանի մը օրեր յայսոյ, Երկարամաս, յայտնի գէմք մը Երաւաղէմի մէջ և անդամ Մենակրիսնի, Օտարականին հանդիպեցաւ զիշերով և աւզից լսել իր վարդապետութեանը մտահիւ: Օտարականը համակրանքով ընդունեց իրեն հետ Օրէնքի այս վարդապետը, որուն հսդիր, հակառակ իր մէջ ծայր տևազ փոթորիկին, տւելի հին կը թուեր ըլլու քան նոխամարդուն մաշկառկը:

Օրէնքը և բաւագյն ապագայի մը յայսը ամէն բան էին Երկողեամասի համար: Գիտէր իր ժազովուրդին պամաւթիւնը, սերտուծ էր Տիրոջ պատուիրունինը, և կը մնար խանդավառ մարգարենիրու տեսիլքէն: Իրեն համար Եսայիի խօսքը, Պատիթի երգը և Ազգամանի իմաստութիւնը կը մնային անդերազազնցելի: Իր նոխամայքը եկած հացը և պատրաստած զինին զիրագոյն հազարդութիւնն էր անցեալին:

Տառին զգայչ բարեկամն էր ան, զիրաքերու մարդը, զիշերային աշակերտը, մէկը որ պիտի ուզէր ըլլու, բայց չերեւիլ: Հակառակ իր հետաքրքրութեան, պատ չէր իր հոգին անցեալի զգթանիրէն:

Իրեւ տիպոր Խորոյէլացի, իր ցեղին երազներով և յայսիրավ կ'օրօրսւէր: Մէկը որ զիտէր սպասել և յօւսաւ, սեհուած իր նոյսուածքը ապագային:

Ոչ հսսող ժամանակը, ոչ աննպաստ պայմանները, ոչ ուլ իր ձերմակ մազերը, որոնք իրեն ըսել կ'ուզէին մէ երազելու ժամանակը անցած է, չէին տկարացուցած Երկողեամասի մէջ աննուածելի յայսը զաւիքի նկատմամբ: Ան անձկութեամբ կը նայէր ապագային, որսվհանե ներկան չէր զահացներ զինքը: Ան թէ ինչո՞ւ համար ուզուած էր ապագային զիշերութիւնը:

— Ես լսած եմ, ըստ Երկողեամաս,

Հիւելը, Յաւգա Գալանացին և Գոմազ զիէլը, ծանօթ եմ նոյնապէս Յավհանակս Մկրտչազի վարդապետութեան և Մհափայի մասին իր ըրած յայտարարութիւններաւն: Կուզէի զիտանալ թէ ի՞նչ է այս նոր թագաւորութիւնը որու մասին կը խոսիք:

— Բայց են նոր թագաւորութեան դուռները, իր պանդաւիտ զաւակներաւն կորկուուած հօր մը բազուկներաւն նման, ըստ Օտարականը: Երկնքի արքայութիւնը ձեր մէջն է, իրրե կենդանի իրականութիւն մը, սակայն ան վեր է աշխարհէն, իրրե արեալ լեցուն ապագայ մը: Բայց ճան մանել ազգալ պէտք է վիրատին ծնի, վարնան վերընձիւզոյ սերմին պէս, կամ նման մասթ խորհաւրդին որ կը բացովառի յանկարծ:

— Ի՞նչպէս կրնայ մէկը նորէն ծնի, երբ ծնուծ է արգէն, ըստ Երկողեամաս:

— Վիրատին ծնի, կեանքին նոր խորք և իմուստ տալ է, բարձրացնելով մարդը սպարտիկն ու ծանծաղ հասկացութեան, անցեալ ու աւանդական ըմբռնումէն՝ յայտնութեան լոյսին: Վիրատին ծնուծ կ'ըլլունք երբ կը նորօգինք հինը, ինչպէս զարունը կը հասունայ պազալից ամառուանը մէջ: Այս կիրառվ այլեւ չենք պատկանիր միայն ժամանակին ու հոգի ճակատագրին, այսինքն նիւթուկան սահղծագործութեան, առաջին աղամինը, այլև «երկրորդ աղամինը», որ տէրն է այս նոր թագաւորութեան: Մարդիկ կը ծնին այն օրը, երբ կը հազարդուին անհունին հնա: Երանի՝ անսոնց, որոնք ունեցած են օրը՝ երբ երկինքը ինքնարերարութ բացուած է անսոնց հոգիին մէջ և զգխուն վերեւ: Այդ վայրկեանէն կը սկսի էտիքի մը հազեկան անձնուարութիւնը: Սակայն մինք յաձախ կը նմանինք աւանդութեան կայրերաւն, Տաճարի աստիճաններաւն զրայ նոտած, որոնք Ասաւածոյ անցնելէն և սրբուանին պղնձեալ զուռներաւն զացուելէն վերջ միայն աւզեցին լսել իր ձայնը:

— Երկնքի թագաւորութիւնը ձեր մէջն է, որսվհանե ձեզմազ կը սկսի: Հանգերձեալ է, վասնզի անոր կապուած է միը ճակատագիրը: Սակայն ով որ ճան մանել կ'ուզէ, պէտք է հոգիսվ վիրատին ծնի:

Հին Ռեխափի օրէնսդիրներն ու մարզարքները տեսան իրենց սահմանական միայն, որովհետեւ իրենց կանոնակիրութ զիմաւարեցին արդարութեան Արքակիր, առաջ իրենց աշխարհով նայիլ կարենալու Անորդ Ան որ հետո է և ձեր մէջը կը բնակի, ճառագայթն է արեին և բացը ձշմարտութեան:

Մեր այս աշխարհը հայելին է յաւ սփառականութեան, ինչպէս լիճը երկընքին եթէ կարենայիք ձեր փաքը ուսնամաններէն գուրս նայիլ, պիտի տեսնէիք ձեր Երկնուուր Հայրը որ կը քարէ ամպերու մէջէն, երկարած իր առնենողօր բազուկը կայծակին Պիտի տեսնէիք իր առնայչ և կենասաւ ժամփը՝ չուշփացի մը նման փառուծ ծաղիկներու և ջաւրերու սրան, արեավ քաղցրացած Այդ հագեանութիւնը կ'աւնենան անոնք միայն, որոնք պիտին նստիլ բարձւանքներուն վրայ, ուր հազին կը նուածէ նիւթը, ոնոր մէջէն իսկ տեսնելու թէ տէջն արարք և խորհուրդ տիեզերքի մէջ կապաւած է անվրէպ՝ մնե ու անման արժէքի մը Պէտք է բաց պահել հազին մէջ աւեսանելիքն անահաննելին տանազ ճամբառները:

Կը նայիք ու չք տեսներ, մորիկ կ'ընէք և չէք լսեր: Պէտք է նարազէք ձեր միաքն ու հազին, այն տան ձեր աշխարհը չեն արդիլուիր արքներու քաղաք, և գուք կը տեսնէք իրենց ինչպէս տեսաւ առաջին մարդը իրենց աշխարհը կ'աւնենէն իր առնայչ իր առնենութիւնը մէջէն առնայչ ամբարդութիւնը:

Երական կայրերը անոնք են, որոնք միայն աշխարհավ կը տեսնեն, և խուլերը անոնք՝ որոնք միայն ականջներավ կը լսնա: Պարագէք ձեր ականջները հնութեան ձայներէն և բացէք ձեր սիրահերը օրերու խասաւմին, և գուք կրնաք զգու սանածայները հրեշտակներուն՝ որոնք կը քարին տէջն օր Յուգայի թանիքն:

Սաւագիւ գեղեցիկ է տեսանելի աշխարհը, բայց գերիիիր է երկնիք թագաւորութիւնը, որուն իշխանն ու պատգամամուսրն հմ հա: Աշխարհ մը անպատմիլի, կախուած անհունի շրմներէն, առանց մեղքի և ոսւտի, իրեւ երազ սովիտուկ և մարմին ձշմարտութեան, կայլակն ան-

վերջ և թրթառն, որ զիտէ ամէջն օր աւելի բիւրեզանալ Աստուծոյ անհուն ծացին մէջ: Արբազան վայրը մեր իղձերաւն, երողներաւն, բալոր այն գեղեցիկ բաներուն, որոնք այս աշխարհի վրայ տակաւին չեն կրառը շնչել աւ ապրիւ, որուն բնակիչները կանաքին չեն նայիր իրենց սիփական աշխարհով այլ Աստուծոյ լոյս սովը:

Ենիկողիմոս կը լսէր այս բոլորը, նման մարդու մը՝ որ ինքինքը անսիլքի մէջ կը զգայ, գիտանուզ հանգերձ թէ արթաւն է: Զէր յիշեր թէ երբէն ի վեր հան էր, բայց կը զգար թէ ուրիշ աշխարհն մը կը բացուէր իր գլխաւու վերեւ, ապրեր ցարդիր երեալայացածէն: Բւ կը մտածէր ինքնիրն, Ուցիւ թէ երթառարդ ըլլոյժի և գուրս այն ընկերութեանէն որ այժմ զիս իր մէջ տած կը տանիք, նման ջաւրի հսկայ ալիքներուն, որոնց հասանքին զէմ գժուար է թիավարել:

Օտարականը թշնամի չերեկիր ոչ մէկ անհուստի և ցնդի, կը մտածէր ենիկողիմոս, վասնզի ան կը նայի տիբազներաւն և հոգատակներուն հուռասոր աշխալ, նման հօր մը՝ որ կը զիտէ խազալիքներով զրուազ իր միծ ու պատիկ զաւակները, որոնք կը ճգնին իրարու ձեռքի խլելու ամենամեծը: Անոր հազին մէջ կայ մարդոց շարտայարած բարսր սրբախութիւնները և իր աշխարհաւն խորը՝ շթափաւծ արցունքները:

Մութ էր արգէն եր Ենիկողիմոս հրաժաշտ տառ Օտարականէն: Անիկա կը բարեւէր գիշերուան մէջ նման մարդու մը՝ որ կ'ուզէ արթնալ իր երազն ու չի կրնար:

## Բ.

Օտարականին շաւրջ շատաց հետաքրքրութիւնը տակաւ թոյնի կը վերածուէր Փարիսացիներու և Դպիրներու հազին մէջ: Աշանը վերջանալու մօտ էր և Օտարականը կը պատրաստուէր իր աշակերտներուն և հատեսրդներուն հնամիանի Գալիլիա վերտոգառնալ:

Երուազէմէն Գալիլիա տանող ճամբան կ'անցնէր Սիւրեմի հազին, իրան և Գարիզիմ լիներու միջնե արտածուած: Հրեմները կը խուսափէին այս համբայէն:

և կը նախընտրէին Պիրէայի վրայէն ընկերութեաց շրջանմը, Սամարացիներուն չհանդիպելու համար Մովսիսական հրեաներուն արգիլուած էր այս հերձուածին հետայրաքրել, որովհետեւ ըստ այս վերջիններուն, անոնց հացն ու խօսի միսը միեւնոյն էին: Օտարականը հեռու էր այս կարգի նախապատճեններէ:

Երբ Օտարականն ու իր հետեւորդները Սիւքիմի հովիսը մտան, արգէն կէսօր էր: Հեռուէն կ'երեէին Սամարիոյ լիուները, իսկ անոնց կողերուն՝ մակազած ոչխարհներու հօտերը թուղթին վրայ ցանցնուած գորչ կէտերու կը նմանէին: Անոնք բռնորը յոգնած, նստան քաղաքէն բռնական հեռու եղաղ ջրհորին եղերքը, որ հրէից նահապեաներէն Յակոբի անունը կը կրէր: Թիշ յետոյ աշակերտները գէպի հեռաւոր գիւղերը գացին, օրուան անհրաժեշտ պարէնը հայթայթելու:

Օտարականը առանձին էր ջրհորին հզերքը: Աւելի դիւրին է, կը մտածէր ան, քարին տակ թաքչած ջուրին ձայները բղխեցնել, քան սսկարներու ներքեւ եղաղ արեան ձայնները լսելի ընելի Ու կը նայէր ջրհորին, յաւերժական այդ բարիքին, որ սերունդներու պատակն էր մեղմեր իր արբուն ջուրերովը:

Իր մտքէն կ'անցնէին Մովսէս, որ գաւազանի մէկ հարուածով ժայռէն ջուր էր բղխեցուցած: Ամմերու մէջ սաւառնող եղիան, իր ոսկի կառքով, ինչպէս նաև հրեղէն մարգարէն որ ջուրով կը մկրտէր իրեն եկողները, որուն գերեզմանը սեղացնելիք էր առաջնորդներուն գիւղուած: Յիշատակները . . . մեռելները կարգով կ'արթնայային իր մաքին մէջ, չարչարուած և այլամերժ հոգերով խոփնուած, որոնց վերյիշուածը Օտարականին մէջ կ'արթնայնէր անձկագին խռավքը անցնող ժամանակին:

Երբ Օտարականը այս մատծումներուն հետ էր, Սիւքիմէն կին մը եկաւ հորէն ջուր առնելու: Օտարականը կնոջմէն ջուր ուզեց: Կինը զարմացաւ որ հրեայ մը Սամարացիէն ջուր կրնայ ուզել, ապա տեհլցուց, իր մատծումը ամբողջացնելու գգացումով: «Մինք դիմացի լիրան վրայ

կ'երկրպագենք Աստուծոյ, իսկ դուք հըսներդ կ'ըսէք թէ միայն երուսաղէմի մէջ պէտք է երկրպագել Տիրով: Օտարականը նայեցաւ կնոջ, որուն աչքերուն մէջ չգոյնացուած ըղձանքներ կային, ըստու: «Օր պիտի գայ որ մարդերը ոչ երաւաղէմի մէջ և ոչ ալ դիմացի լերոն վրայ պիտի երկրպագեն Աստուծոյ, այլ ամէն տեղ, որովհետեւ Աստուծոյ ոյժին և ճշմարտութեան առջեւ սարսաւզին կեցաղ մեր հոգին կը նմանի տաւիզի մը, կախուած երկնքի և երկրի միջնեւ, որ կը հնչէ Գերազոյնի հպումներուն ներքեւ: Մէսն ու տեղը կը պայմանաւորեն միայն յարժարութիւնները մեր անձին: ԶԱստուծած զգացող հոգին նման է ծովափի սոտրէին, որ իր մէջ ունի մրմունջները ալիքներուն և յաւերժական երազը տազին:

«Աստուծոյ շունչով լեցուած սիրտը թէ՛ սաղմոս է և թէ քնար, որ դիտէ սրատայայտել իր իղձերն ու զգացումները, ինչպէս վարդը կ'արտաքերէ իր հոտը, տատղը կ'արձակէ իր ճառագայթը և մեղուն կը շինէ իր մեղրը: Միը հոգիները, զերծ աեղէն ու ժամանակէն, կրնան հնչիլ բնութեան վեհապայրին բոլոր մասերուն վրայ, անզուսապ համերգի մը պէս, զոր ոչ մէկ բան կրնայ քնացնել:

«Ազօթքը անհրաժեշտօրէն կապուած չէ քարէ պատերուն: Հոգիւը կ'ազօթէ բաց երկնքին դիմաց, ձկնորսը իր նաւակին մէջ, փոթորկի ընթացքին, և ճամբորդը լուսնի լոյսին տակ: Զկայ աւելի մեծ տաճար քան բնութիւնը, երկնքի սատազորդ կամբառվ խորացած, որովհանե իր պատմէ Արարշին վատքը և երկիրը կ'ունկնդրէ զայն: Երկնաւոր Հայրը մեր հոգիներուն ձայնն է որ կ'ուզէ լսել, այն տաք ու թթուաւն ձայնը՝ որ բնանաւորուած չէ աւելորդաբանութիւններով, ու կը բզիսի մեր սրտէն և կ'երթայ Աստուծոյ սրտին և կը վերադառնայ մեզի օրհնութեամբ: Աստուծած գերազոյն հոգին է, և մարդիկ հոգին և ճշմարտութեամբ պարտին երկրպագել Անոր:

«Մարդիկ ամէն տեղ կը ստեղծին իրինց աստուծածը, համաձայն իրինց սրտի և մաքի բերումներուն: Դիմացի սորին

վրայ կեցած ձեր կուռքերը, անոնք կոչառին Անգլիա, Ներկալ, Ասիմար, Թարքալ կոմ Արտամելիք, իրենց անդթաթեամբ կը խարին ձեր խիղճերը, առանց զանոնք մարքի կորինալու, որավհանե սնատի երազներ են մեռած անցեալին: Հագիսվ ծերացածներ միայն իրենց առևը կը նաև յին, և սպառած ու ճամրու եղերք մատցաղները կ'ոգեկաշեն անցեալը: Մեր երազները սեհառակէար սպազան է, արան դրան վրայ կեցած է երկնաւոր Հայրը:

Յետոյ զարձաւ և ըստ կնոջ, «Դուն քիչ առաջ ինձի առիք այս ջրհարի ջաւրին, բայց հո քիզի պիտի առա կենզանի ջուրը, զոր Սիւքիմ չունի կենզանի ծուրաւ յագեցնող ջուրը, որ չէ այն զուրաթածաղիկ արբեցութիւնն ու երազը կարձատե գիշերներուն, որոնց սառւերին փոթթուած մարգիկ ինքզինքնին բաւարաւոծ կ'ուզեն զգութ: Սէրը զօր հո կը րիրիմ աշխարհին, լի է փառքով և երջանկութեամբ: Սիրիւ կը նշանակէ առլիր ամբողջը: Մեր սիրալ այն տահն միայն կը խաղաղի, կը թարմանայ ու կը րերկի, երբ այս ջուրի դոյլին պէս կը սորովուի, յագեցնելու կարիքը առւողին ու առնողին հուսաւարապէս նոյնիսկ առնոնք որ կրնան ուրիշներուն տուլ այս սիմթակուն ջուրէն, փոխորէն պիտի սուսնան ազրիւր մը ամբազջ՝ որ իրենց պիտի բաշխէ գինավութիւնը հագիին, աւելի հզօր քան բուլոր գինիները աշխարհին:

«Եւրախ չէ այնքան ծառին պառզ վայիլսզը, որքան ծառը, որ իր ամբողջ պառզաները տալէ յանայ, յաջորդ գարնան նորէն կը ծաղկի, լիցուն ժպիտով և տուրացի յայսով: կենանքը կաւառյ, սէրը կը բաշխէ, մահը միայն կ'առնէ: Ավ որ առնել կը սիրէ, կը ծանրացնէ իր բուրը և կը շատացնէ իր պարտքը այս ապերախան ու անդութ աշխարհին»:

Կինը անշարժ ու վայրահակ կ'առներներէր: իր երկայն յօնքերը քաղցը շաք մը կը առածէին այտերուն վրայ: Ան կը նմանէր աղջնակի մը որ կ'երազէ, գետակի ափին նստած: «Դուն մարգարէ մը կը թուիս ըլլու, ո՛վ անծանօթ, և քու խօսքերուգ հայելիին մէջ գալիք գորերը կ'երեին, նման Գարիզին լիրան

շպիտային, երբ որևէ կ'ոսկեզօծէ անոր կատարները»:

— Եթէ քու աչքերդ կարենային ահանդի իրերը իրենց բավանդակ խորհուրդին մէջ, ըստ Օտարականը, ևս քեզի պիտի երեէի իրեւ բացակէզ նոր մարենի մը որ կը վասի առանց սպասելու: Փախիր այն հինգ գներէն, որոնք քուկդ եղան ու կը մեան: Ես եկած եմ սրանելու մալորած սչխարները և իմ սիրոս կը տուչորի գլխութեան հուրով»:

Այդ միջոցին աշակերտները վերադան և զարժանագով նկատեցին իրենց վարգապատը: Սամարացի կնոջ հետ խօսքի նստած: Օտարականը գուշակեց անոնց մատծումը և ըստ բարձր ձայնով: «Մենք բոլորս և զրայրներ ենք և զաւակները նոյն Հօրը: Պատաւարները սրոնք մեզ իրարմէ կը բաժնին, արտահասական են և վաղանցակ, նման մէր մարմինները ծածկող գիւտափին, հինուալու և նհանուելու սահմանութեամբ: Մեր ընկերը, դրացին և ստորական նկատուածը ուրիշ մէկը չէ, բայց մէր լաւագոյն մասը ուրիշ մարմին մէջ դրաւած»:

Երբ Օտարականը դադրեցաւ խօսելէ, Սամարաւնին մօտեցաւ իրեն և խնդրեց որ իրենց քաղաքը հանդիպի: «Ես արդէն իսկ ձեր մէջն եմ: Ավ որ զիս իր հետ ունի, ևս իր մէջ կը բնակիմ, և ան կրնայ իմ սէրս տանիլ իրեններուն»: Յետոյ նայեցաւ Սամարաւնին իր աշքիրու բավանդակ քաղցրութեամբ, և ըստ անոր. «Դուն բազմաթիւ սիրողներ ունիս, սրոնցմէ հինգը ծանօթ են որդէն: Սակայն վստահ եղիր թէ անոնք բոլորը սիրած են ինքզինքնին միայն քաւ մերձութեանդ մէջ: Աւրիշներ կը տեսնեն քաղեցկութիւնդ լսկ, որ պիտի թառամի տարիներու ընթացքին: Սակայն ևս քու մէջդ կը նշմարմէ գեղեցկութիւն մը՝ որ անթառամ պիտի մեայ յաւէտ և որ քու աշունիդ մէջ պիտի չփախնայ ինքզինքը հայելիին մէջ դիտելէ»:

Յետոյ գառնալով իր աշակերտներուն, ըստաւ. «Սամարիայէն, Սիգանէն և Տիւրասէն պիտի գան հաւատաւորներ լիցնելու թոգաւարութիւնը, որ բոլորին կը պատկանի: Մենք իրարմէ կը տարբերինք

## ՊՐՕՆԱԿԵՐ

### Ի՞նչ էր ԱՅՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆԸ ՈՐՄԷ ՊՈՂՈՍ ԱՌԱՔԵԱԼ ԿԸ ՏԱՌԱՊԷՐ

Տուալ ինձ խայր մարմենց  
(Ք. ԿՈՐՆ. ԺԲ. 7):

Նախ մի քանի խօսք իր կեանքի անցուգարձերուն ու զործունէութեան շարք: Պողոս առաքեալ Յիսուսի 12 աշակերտներէն չէր, յիսոյ աւելցած էր անոնց վրայ: Այս պատճառու անիկան կը կոչուի ժամաներեքի բորդ առաքեալ: Թէ և յիտոյ աւելցած է, բայց 12 առաքեալներէն շատ աւելի աչքառու ու մեծ զործ տեսած է Քրիստոսի նորահաստատ Եկեղեցիի պայմանութեան և յառաջդիմութեան ի նպաստ:

Ի՞նչ ըրած է: Նոր կտակարանի 27 զիրքերէն 14ը, այսինքն կէսէն աւելին, ինքը զրած է: Եկեղեցիներ հիմած է ամէն տեղ, մանաւանդ հեթանոս երկիրներու, յունա-հռովմէական աշխարհի ծանօթ կեղրուներուն մէջ, ու մինչև անգամ եւրոպայի հողամասին վրայ: Արով Քրիստոնէութիւնը Մովոփոսական կրօնքէն բոլորովին անջատ՝ համամարդկային ու զուա հոգնոր կրօնք մը գարձուցած է: Քրիստոնէութեան

միր մարմիններով միայն, բայց կը նոյնանք նոյն արիւնով, իրրե որդիներ երկնաւոր Հօրը: Օրուան զեկեղեցութիւնը միայն միզի չի պատկանիր այլ բալորինք:

Յիսոյ գարձու կնոջ և ըստու, «Այսօր դունք քեզի հետ կը տանիս կենդանի ջաւրը, անով կենդանացներու Սիրքեմի չորցած հոգին»:

Կինը կուլոր ու կը նայէր Օտարուկանին, իր ըրթները կը մրմնչէին կործես, թէ ինք պատրաստ էր մինչև աշխարհի ծայրը իրեն հետեւը, որսվհետե անծանթ մատներ իր հոգիին վրայ կը հընչեցնէին նոր նուագ մը, իրեն ծանօթ բայց մասցաւած երգի մը նման:

(Տարմակալիշ՝ 5)

Ե.

աստուածաբանութիւնը կազմակերպած է: Քրիստոնէութիւնը ուսումնասիրելու և անոր աստուածաբանութիւնը սորվելու համար իր գրութիւնները ուսումնասիրել անհրաժեշտ է, ինչպէս կ'ընեն Ա. Գրոց ուսունողներ գորեքանքերու և աստուածաբանութիւններու մէջ:

Երուսաղեմէն ետքը Ախրիոյ Անտիոքի<sup>(\*)</sup> քաղաքը Քրիստոնէութեան կարեսը կեղրուներէն մին էր, մասնգամամյն կեղրոնն էր նուև աւետարանչական գործի: Պողոս առաքեալ այս Անտիոքի եկեղեցին մէջ կը զործ էր: Այս քաղաքէն ճամրայ ելլելով ան կատարեց իր պատմական ու աւետարանչական երեք մեծ ուղեսութիւնները: Այդ ուղեսութիւններուն առթիւ երբեմն կը սովորուէր քալելով ճամրորգել, բայց երբեք չէր յուսահատեր: Քանզի աչքին առջն մեծ նպատակ մը ու բարձր հետանիկար մը կար, և զիտէր թէ որո՞ւ կը հուատար և ինչո՞ւ կ'ընէր այդ զանողութիւնները:

Պողոս առաքեալ աւետարանչական ճամրորութեան ընթացքին երբ զրամի պէտք ունինար տեղ մը կը կինար ու կը զործ էր: Ինքը արհեստավ վրանազործ էր (Քործ. ԺԲ. 3) և անկէ շահած զրամով թէ՛ իր ճամրու ընկերներուն ծախքերը կը հոգար (Քործ. Խ. 33-34), ու այսպիսի զժաւարութիւններու տոկալով, սահմանազանց զանողութիւններով և անգերազանութիւնով յառաջ կը տանէր Աստուծոյ Թագաւորութեան սուրբ զործը: Վասնզի քրիստոնէութեան մեծ սոսաքեալը, բառին բռն առումով, մարմացումն էր համակ զոհազութեան ու նուիրումի, ինչպէս նաև անձնուրացութեան, որոնք ճշմարիտ հաւատացեալի մը էական յատկանիչներն են:

Հրեաները իրենց մանչ զաւեկներուն

(\*) Անտիոք անունը կրող երկու քաղաքներ կային Պողոս առաքեալի օրով: Անոնցմէ մէկն էր Սիրիոյ Անտիոքը՝ ուր Յիսուսի հետապնդեր Քրիստոնէայ կոչուեցան առաջին անգամ (Քործ. ԺԲ. 26): Իսկ միւսն էր Փոքր Ասիօն Պիսիդիոյ նահանգին մայրաքաղաքը՝ ուր Պողոս առաքեալ իր առաջին աւետարանչական ճամրորութիւնն առնեն Քրիստոսի Աւետարանը քաղաքի տեղացի ժողովութիւններուն, թէ՛ հեթանոսներուն (Քործ. ԺԲ. 16-52): Այս վերջինը Սիրիոյ Անտիոքէն զանազանելու համար կը հոչէին Պիսիդիոյ Անտիոքը (Քործ. ԺԲ. 14):

արհեստ մը սորվեցնել պարտականութիւնն կը համարէին, և այդ աւանդական սովորութեան համեմատ Պօղոս առաքեալի ծնողքը իրեն վրանազորութիւններ սորվեցած էր երբ ինք գեղ փոքր էր Այս արհեստը սորվիլ ապագային իրեն համար մեծ օգտակարութիւններ ունեցաւ քրիստոնէթեան շարժումը ծաւալելու իր նույիրական պաշտօնին մէջ: Յիսուս ալ հրեական ընտանիքի մէջ հասակ նետուծ ըլլալուն համար հիւսութիւնը սորված էր իր փոքր հասակին մէջ (Մրկ. Զ. 3):

Հեթանոսաց առաքեալը իր առաքելական մեծ ճամբարզութիւններու ընթացքին ոչ միայն եկեղեցիներ կը հաստատէր, այլև իր հաստատած եկեղեցիներուն համար հոգեոր պաշտօնեաններ ալ կը պատրաստէր: Կազմակերպութիւն մը հիմնել բաղադամար դիւրին է, բայց դժուար է և շտագմաւար գայն պահել և անոր գոյատեսումը ապահովել: Հետեարար իր աւետարանչական երկրորդ ճամբարզութեան ընթացքին երբ Յունատանի Կորնթոս քաղաքը հասաւ, հոն կեցաւ մէկ ու կէս տարի (Գործք, Ժ. 11), և այս ըրջանին թէ՛ կը քարոզէր և թէ կ'ուսուցանէր կենաց Բաննը, թէ՛ ժողովուրդը քրիստոնեաց կը դարձէր և թէ անոնց համար հոգեոր գործիչներ կը պատրաստէր, հոգվուելու համար իր հիմնած եկեղեցիներուն ժողովուրդները:

Եետոյ աւելի որոշ ծրագրով, իր աւետարանչական երկրորդ ճամբարզութեան ընթացքին երբ Եփեսոս քաղաքը եկաւ հոն մնաց երեք տարի, և սորվեցուց Աւետարանի էտկան ճշմարտութիւնները թէ՛ հաւատացեալներուն և թէ հոգեոր գործիչներուն՝ որ հոգվուեն նորադարձ քրիստոնեանները, նախ երկու տարի շարունակարար ամէն օր Տիւրան անուն մէկու մը դպրատան մէջ (Գործք, Ժ. 10), ապա տարի մըն ալ ուրիշ տուններու մէջ, ընդամէնը երեք տարի (Գործք, ի. 31):

Պօղոս առաքեալ իր առաքելական երրորդ մեծ ճամբարզութեան վերջին մասին մէջ երբ Մակեդոնիայէն Փոքր Ասոյ Մելլիորինէ քաղաքը հասաւ, անկէ երւուազէմի ճամբորզ իր մեծ կեցրոնը՝ Ալեքսան Անտիոք քաղաքը վերագառնալու ծրագրով, Մելլիորինէն Եփեսոս մարդ զրկեց և եկեղեցւոյ

երէցները կանչեց, իր հրաժեշտի խօսքերը անոնց արտասանելու համար: Այս առթիւ խօսեցաւ իրենց շատ բազում մասից չեշտով մըն՝ որը արձանադրուած է Գործք Առաքելոցի Բ. պէտուն 17-38 համարներուն մէջ:

Այս երեցները որո՞նք էրն, և ո՞վ զանանք զատարարակելով Ասունծոյ Եկեղեցին զլուխը զրած էր, իրեն կենաց Բանին քարոզիչները: Հեթանոսաց առաքեալն էր արեւադարձ կույզ զարդարաց մեալի զունաք պատրաստած, ձեռնացրած էր ու եկեղեցին զեկը իրենց յանձնած էր որ շարուածակեն այս զործը՝ զոր ինք սկսած էր տարածել ամենուրեք մեծամեծ զոհողութիւններով: Երբ իր հրաժեշտի խօսքերը ու շաղրավիթեամբ ուսումնասիրուին ու վերլուծուն, Խոկոյն երեան կուզան իր ըրած առհմանազանց դոհողութիւնները Քրիստոսի եկեղեցին հիմնելու և անոր զայութեան աւելացումը ապահովելու զործին մէջ:

Ասացին զարու մէջ երբ քրիստոնէւթիւնը ծաւալի սկսաւ, Պօղոս առաքեալի պէս իմացական վայրուն տաղանդով օժաբւած, բարձր, բարձր կրթութիւն սահցած, իմաստատէր, աստուածաբան, կազմակերպիչ, վարչական կարողութիւններով առլի, ձեռներէց, բարձր տեսլիք ունեցող, զոհող ու յոգնիլ չզիւցող հաւատացեալ հոգեռոր զործիք մը պէտքը ունէր Քրիստոսի նորածին Եկեղեցին: Աստուած զինքը իրեն ռանօր ընտրութիւն աշխարհ դրկած էր որ կատարէր այս ճակատագրական ու պատմական մեծ առաքելութիւնը, զոր կատարեց լինցին, ըլլալով ամօնի առանց ամօրոյ:

Սակայն Պօղոս առաքեալ հիւսնացութիւն մը ունէր որ իր աշխարհ բազմազան զրագութիւններուն մէջ զինքը շատ կը նեղէր և կը տառապակցներ ատեն ատեն ինքը անոր ամարմի խալրոց անունը կուտայ որ փուչի նման զինքը կը խաչիթէր: Ասոր համար ինքը Ասունծոյ երեք անզամ յատկապէս աղօթից որ վերցուի իրմէ այս հիւսնացութիւնը, բայց չվերցուեցաւ: Աստուած առաքյան իր աղօթիքին ի պատասխան ըստաւ, ամէ Շնորհի ներիք է Եկղիոյ: Ես քեզի նոր չնորհնք ու նոր ոյժ կուտամ որ կարենաս յաղթէլ այդ հիւսնացութեան: Եւ այդպէս ալ եղաւ: Ինքը զահ եղաւ Աստուածոյ իրեն տուած այս պատասխանէն, և շարունակեց

իր գործը՝ առանց ընդհատելու։ Միևնույն եռանդով, միևնույն նույիրումով ու շարատակութեամբ։ Արօգնութեամբ Աստուած զինքը հագեար նոր ոյժով այնքան լիցուց որ առաջ կրցաւ շաղթել այդ հիւանդութեան, և այսպէս Աստուածոյ զօրութիւնը իր ակարութիւններուն մէջ երեան եկաւ, որով թէ ինքը հագեարապէս օրհնուեցաւ և թէ իր միջոցու Աստուած փառաւարուեցաւ նոյնը Յիսուսի ալ պատահեցաւ։ Երբ Աւագ Հինգշարժի օրը Խաչի մահուան չուցը իր գրայ իջած էր, Գիեսահմանիի պարտէզին մէջ երեք անգամ աղօթեց իր Հօրը որ մահուան այդ լեզի բաժակը Իրմէ հեռացուի, բայց չհեռացուեցաւ։ Հայր Աստուած սակայն նոր ոյժով մը զինքը ա'յնքան լիցուց որ այդ զօրութիւնով կրցաւ տոկալ հրեաներու հալածանքներուն, Խախտաժինքներուն, և հայնիսկ Գողգոթայի խաչի անարգ մահուան։

Մենք ալ երբեմ կիւանքի զոյամարտին մէջ գյուարութիւններու կը հանդիպինք և կ'աղօթենք բարձրեալն Աստուածոյ որ այդ գյուարութիւնները լուծէ ու փերցնէ։ Աստուած երբեմ կը փերցնէ և երբեմ ալ չի փերցնիր զանոնք, բայց մեզի հոգեար նոր չնորդք մը, զօրութիւն մը կուտայ, որով կը յաջողինք տոկալ ու յաղթել մեր զըմաւարութիւններուն։

Արգարե շատ հետաքրքրական է զիտնութէ ի՞նչ էր Պօղոս առաքեալի հիւանդութիւնը՝ զոր ինք սմարտի խայրոց կ'անուանէ։ Այս մասին Ս. Գրոց մեկնիչներ մէկէ աւելի կարծիքներ յայտնած են։ Գէթ անոնցմէ երեքը կ'արժէ խորհրդաւութեան առարկայ ընել։

Առաջին։ Ամանք կը խորհէին թէ այդ հիւանդութիւնը լուսնուուրին էր։ Լուսնուութիւնը տեսակ մը բռնիկ հիւանդութիւն է որուն ենթակայ եղող անձը տանենք անզամ մը իր զգայնութիւնը կը կորսնցնէ, թեթև կծկում կամ ցնցում մը կ'ունենայ, կը նուազի ու զետին կ'իյնայ։ Մի քանի բոլէ զերջը կը հանդսանայ և ոսքի կ'ելլէ։ Յիսուսի բժշկութեամբ հիւանդութիւններուն մէջ այս տեսակներուն մէջ այս տեսակ լուսնու մըն ալ կար։ Երբ Յիսուս այտեկերպութեան լեռնէն զար իջաւ, հոն մարգ մը կար որ միակ զաւակ մը ունէր, որ լուսնուութեան հիւանդութիւնէ կը տառապէր։ Ան զիմանք էր առաք-

եալներուն, բայց անօնք չէին կրցած զայն բժշկել։ Աւայր Արաւոսի մօտեցաւ։ Ան ծունկի զալով կ'ըսէր։ Տէր, իմ ուրվոյն ուզեմի, որ կը լուսնուի եւ շարացաւ կը անջուի, բայցի առ անզամ կրակի մէջ կ'իմայ, և առ անզամ ջուրի մէջ (Մաթ. Ժէ, 14-15)։ Հին առան կը կարծէին թէ ինչպէս շատ մը հրանդութիւններու, նոյն պէս լուսնուութեան ալ պատճառը չար ոգին է (Մրկ. Թ., 19)։

Անոնք որ այս առաջին տեսակի ամիս վրայ կը պնդեն, կ'ըսէն թէ Պօղոս առաքեալ ալ այսուիս տանին տանին կը տառապէր միևնույն հիւանդութիւններ։ Լուսնուութիւնը զինքը զետին կը գարնէր և իր առաքեալ կամ զարծին համար մեծ խոչընդուն մըն էր։

Երկրորդ։ Ս. Գրոց ուրիշ մեկնիչներ ալ կան, որոնց տեսութեամբ Պօղոս առաքեալին ամանձույթ խայլոց կոչած այդ հիւանդութիւնը շեմախան էր որ մերթ ընդ մերթ զինքը կը նեզ էր ու անհանգիստ կ'ընէր։ Զերմախամը հիւանդութիւն մըն է որուն ենթարկուողը սովորականներ բարձր տաքութեան առաբանակ կ'ունենայ որը իրեն ցաւ կը պատճառէ։ Յիսուսի բժշկած հիւանդներուն մէջ զերմախան անհցողներ ալ կույն։ Զօր օրինակ, Պետրոս առաքեալի զոքանչը՝ զօր Յիսուս բժշկեց անոր ձեռքին բանկով, և խօսոյն անոր զերմը անցաւ և բժշկուեցաւ, և սկսու ներկաներուն սպասարկութիւն ընել (Մրկ. Ա., 30-31)։

Երրորդ։ Մեկնիչներն ամանք ալ կը կարծեն թէ Պօղոս առաքեալի այդ հիւանդութիւնը աչի և կարուքի կը կարծութիւն է թէ հիւանդասց առաքեալը քարտուզարի մը զրել կուտար իր նամակները։

Օրինակի համար, Առաջին կորնթացոց (Ա. Կորն., Ժ. 2, 21) և Կողոսացոց նամակներուն փերջին մասին մէջ (Խոզոս, Գ., 18), ինչպէս նաև Թեսազունիկէցիներու զրուած Բ. Թուղթին փերջաւորութեան՝ բարեները յիշելու կարգին, ոլլի բարելը իմ ձևունի Պօղոսինն է որ ամեն բաւրենուն մէջ նաև և ու (Բ. Թես., Գ., 17) կ'լուէ։ Իսկ Համբաւացոց զրուած նամակին փերջին զիտուն մէջ Տերտոս անուն մէկը, Յանքի կ'ընել ձեզի Տիրոջով, և ալ ձերտին, որ այս բուղբը զբացի (Հոօգմ. Ժ. 22) կ'ըսէ-

Տերափոսին այս խօսքը ցոյց կուտայ թէ Թօղոս առաքեալին Թուղթերը քարտաւզարի մը ձեռքով զրուած են: Ան մէկ Թուղթ լոկ անձամբ զրած է: ատթիւ Պաղատիոյ Եկեղեցին զրուած Թուղթն է:

Պաղատիոյ Եկեղեցին մէջ հրեայ քրիստոնեաներու և հեթանոսութենչ դարձի եկած քրիստոնեաներու միջն ուուր վիճուարհութիւն մը կար: Առաջինները կը պահանջէին որ հեթանոսները երբ քրիստոնեայ գառնան՝ նախ պէտք է լուս հրեայ ըլլան, Շարաթթը պահնին, Մագուսի օրէնքները յարգին և այլն: Այս վիճաբանութեան առաջքը անձամբ զրած է, որ արգէն կարձ է և միայն վեց զրուաներէ կը բազկանայ:

Պաղատացոց այս Թուղթին մէջ Պաղոսառաքեալ կ'ըսէ: «Եթէտ զուշ որ մարմինիս Տպառութիւնովը առաջին անգամ ձեզի տիեսարանը բարզեցի, եւ իմ մարմինս վրայ կրած փորձութիւնս շանարգեցի եւ շարհամարնեցի, հազար Ասունոյ նեւետակի մը պիս զիս ընդունեցիք ... որ երկ կարելի եր ձեր աշերը պիսի նանիկիք ու ինձի տալիք (Պաղ. Գ. 12-15): Նայնպէս նոյն նամակի վերջին մասին մէջ կ'ըսէ: «Եայնցիք ինչպիսի զիեւեով գրեցի ձեզի իմ ձեռնովս (Պաղ. Զ. 11): Ասիկա ցոյց կուտայ թէ իր աշքերը պիսի նանիկիք ու ինձի տալիք (Պաղ. Գ. 12-15): Նայնպէս նոյն նամակի վերջին մասին մէջ կ'ըսէ: «Եայնցիք ինչպիսի զիեւեով գրեցի ձեզի ոչ նամակը:

Այս բոլոր խօսքերը երբ իրարու քով բերենք, կուզանք այն եզրակացութեան թէ Պաղոսառաքեալին և մարմինի խայթոց» կոչչածը ուրիշ բան չէր եթէ ոչ աչքի տկարութիւնը:

Իր հիւանգութեան մասին յայնուած այս երեք տեսութիւններէն — լուսնաւութիւն, ջերմախտ և աչքի տկարութիւն — ուստի վերջինը աւելի բանաւոր ըլլաւ կը թուիր: Խորհուգներ աւ կան թէ այդ հիւանգութիւնը բարկում էր: Այս մասին որոշ բան մը չենք զիտեր:

Կեանքի զոյամարտին մէջ ամէն մարդ իր գմաւարութիւնները ունի, և մարմինի խայթոցներէն զուրկ չէ: Մեկմէ ոմանց համար և մարմինի խայթոցը իրենց չքաւորութիւնն է, որուէ կը տառապին և կ'ուզեն ազատութիւնը բարկում էր: Այս մասին որոշ բան մը չենք զիտեր:

Թոցով իրենց սիրելիին կարուսան է, այլոց համար այսինչ կամ այնինչ անբուժիւնը: ուրիշներու համար կեանքի պայքարին մէջ ամէն առաջորդութիւններու հանգիպիլը, ոմանց համար ուրիշներէն, մանաւանց իրենց բարիքը վայելող նիրէն անարդարութեան ու նախատինքի ենթակայ ըլլաւը, իսկ ոմանց համար աւ Շարմինի խայթոցը իրենց այլ եան մոլութիւններուն զիրի ըլլաւն է: Ջոր օրինակ՝ բարկութեան, նախանձի, տաելութեան, հայնայութեան խմիչքի, խազ ամուռութեան եացըն: որոնց զիրութենէն ազատազրուիլ կ'ուզեն բայց չեն կրնար:

Այսպիսի պարագաներու ներքե իրենք քրիստոնեայ մեր ընելիքը երկու է: Դախնաւ չշուռահասեցաւ: Երկրորդ՝ աղօթել Աստուծոյ Ա. Պազոսի նման երկու երեք անգույք, և եթէ հարկ է՝ աւելի անզամենք: Աստուծոծ կարող է լուծել մեր զմուարութիւնները, եթէ չլուծէ իսկ՝ զանոնք յազմելու համար բաւարար ոյժ, զօրութիւնն և չնորհք կուտայ մեզի, որով մեզ յազմական զուրու կը բերէ կեանքի տառապանքներու ու նեղութիւններու մէջէն:

Մըրգ մը որ քրիստոնեալ կը կոչուի և աղօթելու սովորութիւնն չունի, չի կրնար արժանանալ Աստուծոյ այս նորանոր չնորհներուն և օրհութիւններուն: Այն մարզիկ որոնք աղօթել չեն սիրել և կոմ ձանձրոյի կը զգան աղօթելքէն, Աստուծոյ հետ հաշտ չեն, համեաբար կը խուսափին Անոր ներկայութիւնն: Բայ Ճան Պընեանի, Ալկորք մարզը կը դադեցնի մելիք զուրծել, իսկ մելիքը կը դադեցնի անհամք աղօթելու: Աւասի եթէ մէկ աղօթելէ զազրած է, որոշ է թէ մեզք մը մէջտեղ մատծ ըլլաւով յառաջ բերած է այդ կացութիւնը:

Աղօթքը մեզ Աստուծոյ կը մատեցնէ և Անոր հետ մահերմիկ հազարզակցութեան մէջ կը դնէ: Այն որ ամէն առաւ կ'ազօթէ և հոգեար ներշնչութերով ու օրհութիւններով լցուած առէնն զուրս կ'ելլէ, Աստուծոյ ներկայութիւնը իրեն հետ կ'ըլլաւ: Օրուան բոլոր ժամերուն մէջ, որով կարող կ'ըլլաւ զիւրութեամբ յազմիկ կեանքի, զիւրութիւններուն: Բայ Ֆելլումի, զիւրութիւնը գրապահի ժամացոյի կը նմանի, և Մարզը գրապահի ժամացոյի կը նմանի,

\* \* \*

Միջև անկոխ համբավերտ  
Կապրեր, ունի «Տով» ակին.  
Ոչ ո՛ւ կար հոն զին զովելու,  
Քիչե՞ւ սիրով սրտազին:

Մասնաւ մը ժայռին մօտիկ,  
Կը մը պահուած աշերելն,  
Սղուոր, աւսդի պէս մէկ-հատիկ,  
Փայլող երկնի կամարէն:

Ապրեցաւ անձանօր, յիշեր  
Եմացան երբ ա՛լ չըկար.  
Լիսօնին հողին զիրկն է իշեր,  
Ո՞ն, սարքե՞րին ինձ՝ համար:

W. WORDSWORTH

Թրգմ. Մ. ՄՈՒՍԻԿԱՅԵՎՆ

Երբ աւտու իրիկուն ալօրենով շլարուի՝ աւ-  
նօդուն հակ մը կը դառնայ:

Հայաստանեայց Եկեղեցին ուրիշ Եկե-  
ղեցիներէն չառ աւելի հոգեցունչ աղօթք-ք-  
ներ ունի իր ժամագրքին մէջ: Ա. Գրիգոր  
Նորեկացին այնքան աղօթտասէր մէկն էր  
որ Աստուծոյ հետ կը խօսէր չարունակ:  
Իր նուրին Ալօրամատեմիր լեցուն է հոգե-  
րուսի աղօթքներով: Ա. Ներսէս Շնորհալին  
նոյնպէս այնքան աղօթտասէր մէկն էր որ  
Հայց: Եկեղեցւոյ աղօթքներուն ու չարու-  
նաներուն կարեսը մէկ մասը իր զրշէն  
ելուծ է: Իր աՀաւատով խոստվանիմք աւ-

դօթքը՝ որ 24 համարներէ կը բազկանայ:  
Հայց: Եկեղեցին աղօթքներուն փառա-  
պսակը կը կազմէ և թարգմանուած է 36  
տարրեր լեզուներու: Այն ժարդը որ կ'ա-  
զօթէ իրրե քրիստոնեայ, իր պարտակա-  
նութեան պատճեցին վրայ հաստատուն կը  
մեայ ամէն ատեն, և Աստուծած ալ մէկ կամ  
տարրեր միջացներով կ'օգնէ իրեն միշտ:

Աւրեմն չվհատինք կեանքի խօչընդուռ-  
ներուն առջն, աղօթքով մեր զժուարու-  
թիւնները Աստուծոյ տանինք, ինչպէս Պո-  
ղոս առաքեալ բրու, Աստուծած կարող է  
մեզի յաղթութիւն տալ:

Ֆրեզիս, Գալիք.

ԴՐ. Ա. ԽՈՐԾՅԵԱՆ

Ո.մ.ն Էակ ինձ՝ Էակից,  
Ո.մենուն զէմ սիրտս բաց.  
Ո.մ.ն ցարին ևս ցարակից,  
Ո.չի ամենուն համար բաց:

«Գիր»ը նոյն է մեր ամենուն,  
— Պատրասիներով օրօրմիլ,  
Նայիլ պահ մը սա առևան,  
Յեսոյ Մուրին մէջ բարուիլ:

Մենի ամենու ալ Բախտին ձրգուած,  
Պարապին մէջ անսահման ...  
Ուրեր են մենի բնդիչ լիբուած,  
Անսապատան, անկայան:

### Ք Ա Ռ Ե Ա Կ Ն Ե Ր

Բախտն առանց ինձ՝ հարցընելու զիս բանասեղծ լսեղծեց,  
Եւ փոխարէն այդ «Նընորհ»ին ծրնած օրս զիս անիծեց.  
Թէ հանդիպիմ օր մը իրեն, պիտի բընթիմ օճիմն,  
Պիս՝ անարզեմ մարդոց առցեւ, բուժով երկոր օճեմ:

(Պ Ա Տ Ա Կ Ի Բ Ա Ն)

Ինչ որ պիտի սաս, Տուր սիրտիդ բառէն,  
Սիրտէն բըխա՛ծը կը նասնի սիրտին,  
Ո՛խ, որքա՞ն ծարաւ սիրտեր կը սպասնի,  
Հիւղակին մինչեւ սեմը պալտսին:

Մ. ՄԱՆՈՒԵԼԻՆԻ



## ՀԱԿՈՒՄ ՄԵՌԱԾ ՅՈՅՍԵՐՈՒ

«Եկեղէ ի պետք իմ . . . :

Խփրաբայի նովիշին մէջ ծուարած  
լիսուանուէր Քոյեռուն

Զամազի մը ձայնն կ'աւետէ պահն խոլումին՝  
Մարմնադրուժ այդ կիներուն երկնատեն.  
Երազուակ՝ կուզան կարզու կը շարուին,  
Դերեշանիկ՝ իրենց ազուոր սուզին մէջ:

Մինչ Անձելիսն մոք սարերէն նեռակայ,  
Ազանաւերապ այդ կոյսերուն գեղունի,  
«Եկեղէ»ի «Ավէ Մարիա»ն կը նեկերայ,  
Միանձնունի մինչպէս տրում առունի:

Եղբայրնի՝ պարզած թեւեր առքիքեր  
Հոգիներուն, ուր ուռւաններ կը ծաղկին  
Տուատի յորդ շարուանին բովն ի վեր,

Կարտասանի. «Եկեղէ, Տէ՛ր», երազին  
Հածեւ տուած մեր որերուն յոգնարեկի:  
Եւ ա՛լ չծաղկի մեղմի մայիսն նոն երբեք:

## ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ ԼՈՒՍՆԻ ՏԱԿ

Դարան շարան կուզան ան նի բոլորուիլ  
Վերշալոյսի ողերովը բոքնիկած  
Մահուր, անզայս բաց երկնին սը տակ բիլ,  
Ազօրքի մէջ վիմատառած՝ առ Աստմած . . . :

Այս ներէն վեր կը բարձրանայ, լուռ խորհուրդ,  
Դէմ մը աղուոր, նըման մօրը Յիսուսին,  
Այժեր ամէն անոր կ'երան անյազուրդ,  
Հրաւակերս այդ ենրուածին, լի լուսին,

Առ երկինքն կ'իջնէ կարծես յամրաբար  
Երկրի վրայ իր ժայիսունի արձարէ,  
Առ որերու սըկինին մէջ իրը նըխար

Միուննաշիք՝ հայրողութիւն կը կարէ:  
Մինչ Քոյերը այդ տեսլին նրարած՝  
Սուաննարեն կը մերձնենան առ Աստմած:

## ՀՄԱՅԵԱԿ ԳՐԱՆԵՐՈՒ

(Խփրաբայ, Կարոլիկ Քոյեռու  
մենաստանին առջեւ, 25 Օգոս. 1908)

## Ա Ս Տ Ա Խ Ծ Ա Յ

Երէ մարդերը բոլոր Քեզ ուրացան կատալին,  
Քեզ պատեխու տեղ երէ ուիլի հորքեր պատեղին,  
Երէ երեխ գիտութեան խօսիութեանդ իրենց վես  
Տալ կեանի մը նես մարդեռուն յաւակնեցան առանց Քեզ,

Երէ մոոցան Քեզ նոյնիոկ անոնի որ որ մը քրին  
Խորաններուդ առցի առեր ուխտեան իրենց վեռական  
Ի զին ամէն զրկանի նետելու Քու առդին,  
Ու զայրեցան՝ ըլացած նոյրին փայլէն մոզական,

Բայց, Տէր, ներէ՛ դուն իրենց, ու բող կեանքր վերսին  
Առնէ՛ խառան իր վսիս սրերէն ներս բոլորին,  
Ու չերենի ապազան այստան անյոյս, այստան մոր ...

Զօրսութեան աշխատինի, բռնակալները անզուք,  
Երենց մեղքի բռնան տակ, լուէ, ի՞նչպէս կը նհծնին,  
Ու Տէր, զրա՛ լոկ իրենց, «զի ոչ զիտեն զինչ զործեն»:

## Ա Վ Ճ Ճ Ա Ա Պ Ճ Ճ

Կարծէ՛ ապրիլ կեանիք այս, նորէն կ'ըսնի ևս անզխոչ,  
Քեպէտ բանի, ախորի ճամբաններէն անցնի ան,  
Քեպէտ վիւս, սուզ, կոծ ու դառ լոկ մեր բաժինը ըլլան,  
Կարծէ՛ ապրիլ երբ ունին առողջ նոզի, ճանդարս խիճն :

Ու կը սիրեմ կեանին այսօր իր էսորեամբը համակ,  
Ի՞նչ փոյք երբ դեռ կը կոտսան ինծի սուած վլրեան իր,  
Ինչպէս կոյս մը առվազգեղ մենի կը սիրեն ճակառակ  
Կատակներուն իր անհամ, հմայթներուն դաւադիր:

Կեանիք սիրոյն զուզբնբաց, ես կ'ափսոսամ բանկազին  
Ինձմէ անզառակ բաժնուող մասնիկներուն վրայ կեանիքին,  
Ցարքը որոնց պիտի ուս տուէր ճանչնալ ինձ, աւա՛ղ ...

Զի զտած եմ կեանիքն մէջ ես ա՛լ խմառ մը վսին,  
Որ զիս կ'ընէ՛ յուսալից, բայցիր ամուր ու անվախ,  
Ու այդ յոյսով երջանիկ՝ ես այս տաղը կը նիսնմ ...:

Գ. ՃՈՐՏՈՒ

## ԲԱՆԱԿՈՒՐԱԿԵՐ

ՎԻՌԱՄԵԼԱՊՈՒՀԻ ԹԱԳԱԼԻԱՐՈՒԹԵԱՆ

ՏԱՐԻՆԵՐԻ

(399 - 419)

1. — Արշակունիաց Հարստութեան վերջաւոյսին փայլող մեր այս պատուական թագաւորին իշխանութեան տեսողութիւնը մին է մեր ազգային ժամանակագրութեան վիճակի հարցերէն։ Բերաքանչիւր բանասէր և պատմաբան տիրող անորոշութեան մէջ ջանացած է ճշգել թիւը վառամշապուհի թագաւորութեան տարիներւն և զետեղել զանանք մեր արդի քրիստոնէական թուականին ըրջանակին մէջ։

Ահաւասիկ շարք մը հեղինակներու ուրոնք իրարմէ տարրեր ըրջանի մը մէջ և այնքան տարրեր տեսողութեամբ ընկածած են վառամշապուհի թագաւորութեան ժամանակամիջոցը։

Ա. — Հ. Ա. Ակինեան<sup>(1)</sup> — 8 տարի — 400/401 - 409/410։

Բ. — Գ. Ֆնտոլեան<sup>(2)</sup> — 21 տարի — 398 - 418։

Գ. — Կ. Յ. Բանմաջեան<sup>(3)</sup> — 22 տարի — 392 - 414։

Դ. — Հ. Ա. Տէր Մագսէսեան<sup>(4)</sup> — 23 տարի — 391 - 414։

Ե. — Ա. Ա. Օրմանեան<sup>(5)</sup> — 26 տարի — 389 - 414։

Այս այլազան թուականներէն ո՞րն է ձիւզը։ Պէտք է քննել։

2. — Մեր ունեցած պատմական տառաջն կառւանն է Կորիւնի տուած հատեալ տեղեկութիւնը, ըստ որւն Մաշտոց հայերէն զրերու զիւտը յաջողութեամբ կատարելէ ետք Եղեսիային կը վերտպանաց վարչապատ որ զիցերորդ տամի վառամշապուհի թագաւորութեան մէջ տարի։

Հապհոյ արքային Հայոց մեծացք<sup>(6)</sup>։ Այս կարես զէպքը, Հայոց պալութեան ոկրպանուրութիւնը, տեղի ունեցած է դարձալ Կորիւնի ուրիշ մէկ վկայութեան համաձայն շատզկերտի ութերորդ տարին<sup>(7)</sup>։

Այս երկու տեղիքներու զուգազրութեամբ կը տեսնաք թէ Յազկերա առաջնին ութերորդ տարին կը համապատասխանէ Վատամշապուհի զիցերորդ տարիին։

Աւրեմն նախ և առաջ պէտք է զանել Յազկերտի իշխանութեան ոկրպանուրութեան տարին։

3. — Արդի պատմաբաններէն և բանասէրներէն ընդհանրապէս ընդունուած է թէ Յազկերտ առաջին զան եւած է քրիստոնէական թուականի 398/9ին։ Այդ հաշուով Յազկերտի ութերորդ տարին կ'ըլլայ 404/5, որ միւնոյն ժամանակ կը հանդիսանալ Վատամշապուհի իշխանութեան զիցերորդ տարին։ Այս հիման վրայ կը ճշգույի վատամշապուհի գահակալութեան թուականը որ է 399/400։

4. — Այժմ հարկ է զիւնալ թէ քանի տարի թագաւորեց Վատամշապուհի։ Այստեղ մեզի օգնութեան կը հասնի պատմահայրն Հայոց Մագսէսէսէնացի՝ զրելով։ Վատամշապհոյ թագաւորեալ ամս քսան և մի միանիս<sup>(8)</sup>։

5. — Աւրեմն պատմական այս տառաջն երման վրայ մեզի կը մնայ եղրակացնել թէ Վատամշապուհի թագաւորած է 399/400 - 418/19, քսան և մէկ տարի։

Ն. ԵՊԱ. ՄԱՂԱԿԱՆ



(1) Կորիւն, Վիեննա, 1952, էջ 79։

(2) Պարք Մաշթոցի, Երևանգէմ, 1930, էջ 78։

(3) Խեկական Պատմութիւն Հայոց, 1914, էջ 220։

(4) Պատմութիւն Հայոց, Մասն Բ., 1923, էջ 148։

(5) Ազգապատում, 1912, էջ 286։

(6) Վարք Մաշթոցի, Ֆնտոլեան, էջ 21։

(7) Ասլու, էջ 77։

(8) Մատենագրութիւնը, Վիեննա, 1865, էջ 248։

## ԳՐԱԿԱՆ

### ՍՓԻՌՈՔԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ա.

(ԿՐՈՆՔ — ԱՐՈՒԵԱՏ — ԳԻՏՈՒԹԻՒՆ)

Հոտ է խօսուած ու գրուած Ափիւռ-քամայ գրականութեան մասին։ Հոտ մէջ նպատակը չէ տնդամ մը ևս վիրլուծման հնթարկել Հայ Ափիւռքի մէջ վիրջին մօտ կէս դարու ընթացքին իրադործուած գրական վաստակը, բան մը՝ որ գաւրս կը միայ մէկ կարողութեան ուսնամաններէն և որ կատարուած է ա'յնքան սպառի կիրպով՝ մէկէ աւելի տաղմնդաւոր գրագէան հերու կողմէ։ Այլ անդրադառնալ այդ գրականութեան տարուէ տարի կրած աշխատ գունումին, նուազումին տաիթ տուազ հարցիրուն, փորձելով միաժամանակ հաս-տարակաց եղր մը գտնել մէր և ուրիշ ժաղավարդներու նոյն այս շրջանի գրա-կանութիւններուն աւ անշքացումին, ձա-պազումին, գոհնկացումին միջեւ։

Այդ ընելէ տառաջ, հարկ է համապար-փակ ձեսդ պարզել այն ազերսը՝ որ գո-յութիւն է ունեցած միշտ և ունի ընդմէջ արաւետաին և կրօնքին։ Ումիւս կողմէն, այս երկուքին հասարակաց տարրերը հա-կադրել կեանքի այն միւս, երբորդ միծ զօրութեան՝ որ կը կաշուի զիսուրին։ Այդ հարցերու շօշափումէն յառաջ գոլիք լոյսին տակ յատակ և դիւրըմրոնելի պիտի դառնայ և, դարու տառաջին քառարգէն ասդին գրական մարզի մէջ երեան եկած նահանջը, առաւել կամ նուազ չափարակ բոլոր ժաղավարդներուն աւ մօտ։

Աչ ոքի գողանիք է թէ վիրջին կէս դորու ընթացքին գիտութիւնը հակացա-քայլ յառաջդիմութիւն մը արձանագրեց։ Այդ մարզին մէջ կատարուած շշմեցացին նուածութիւններուն իրրե արդիւնք՝ նիւթը, մհանգը, մեքենան դարձան նոր սերուն-դին առաւելագունց ուշադրութեան տառը կան, երկրորդական, երրորդական կարգի իջեցնելով կրօնական, բարոյական և

մշակութային արժեքները<sup>(\*)</sup>, Մարդուն հանապազ նորութիւններ որոնող և տիեզերքի թագուն խորհուրդները քօղազեր-ծելու հետամուլտ միաժը ամբողջութեամբ կլանուեցաւ գիտութեամբ, որ մարդկա-յին կեանքը աւելի հեշտ ու երջանիկ ըն-ծացիւու իր նպաստովը բնական է որ իրեն լարէր մտածաւմները բոլորին։ Ասոր ի հետևոնք, իմացական հնտագրքու-թիւնները նուազեցան, նոհանջեցին, իրհնց տեղը գիշելով գիտական աշխարհի պէսպիսաւն ու զարժանահրաց նորու-թիւններուն։

Միւս կողմէ, անկրօն վարդապետու-թեանց ծառալունին ու տիրապետումը կարգ մը երկիրներու մէջ, կրօնական ուսման վասրումը այդ և աւրիշ երկիրներու գպրցական գատացուցակներէն, կարգ մը կրօնաւորներու կողմէ շահագործումը իր-հնց սրբազն դիրքերուն՝ ի խնդիր ձգձիմ հաշիւններու, և այդու հեկզեցական տատիճանի վահմութիւնն ու սրբութիւնը այլագունելու կանչուած անոնց արարք-ները ի վիրջոյ անխուսափելիօրէն պիտի ծնունդ տային անհաւատ ու անտեսիլ սե-րունդի մը որ հթէ չուրանար իր հայ-րերուն Աստուածը, զէթ իրեւ առասպել պիտի արմեորէր կրօնքի ծագման ու զարգացման հետ կապ ունեցաց հարցերն ու երեսյթները։

Ու գնինք հարցը ։ Ներկայ դարը, ու մո՛նուանդ Հայ Ափիւռքը, ի վիճակի՞ է ծնունդ տալու և անուցանիլու միծ ու իրու գրագէա մը։ (Հարցը թող չթուի տարօրինակ, վանդի եթէ բանաւոր է ընդունիլ թէ ներկայ գորը, հնա տիրող հագերանական և ընկերային պայմաննե-րուն թերումով, չէ կարող սուրբ մը տու տշխարհին, անհնթիթ չէ հասաւատումը թէ ան կրնոյ ի վիճակի շըլլու տալու նույ վաւերական արժեքով գրագէտ մը

(\*) Գիտութեան այս բացառական երեսին վերբերումը հետեւանքը չէ երեք անոր և կրօնքին միշտ եթէ ոչ համագործակցաթեան, գէթ խաղաղ համակեցութեան հաւատքի վեռա-զումին։ Անոնց՝ իրրե իրերամերժ ու իրերա-մարտ իսկութիւններ, զարուսոր ու ազիտաւոր պայքարի մեջմացումին պայծառ հեռանկա-րին հանդէ ող բացարձակ յանեսութեան։

կամ՝ մշտակաւթային գործիչ մը, մանաւանդ և հրթ հետագայ տպերով բացարկենք թէ սրբան կամ է կամ ուրջը ընդմէջ արտահաներուն և կրօնքին):

Այս հարցումին պատասխանելէ տուաջ, հարկ է աւսումիսսի իրել հոգեսոր ու բարոյական սյժերուն և գիտութեան դիրքն ու իրար դէմ ողարզած կեցուածքը վերջին տասնամեհակներուն: Ցայց առաջ թէ ո՛րքանով անոնք կրնան օժանդակ ըլլալ իրարու և ուրկէ՞ է սր կը բացուի խրամար անոնց միջեւ:

Արտեհոսը, ըստուծ է յաճախ, սկրառէն կապ ունի մեր հոգիին, մեր օնկրքին հոգին հնա: Մեր հոգիները յաճախ ծառաւը ունիցած են անսր, ձիչդ ինչպէս ունիցած են ծառաւը հոգեսոր իրազութիւններուն, կրօնական ներշնչումներուն, ու վերջապէս անոնց ակնադրիւրը եկազ Աստաւածոյ: Եախտամարդն իսկ, արիկերքի Արտրիչը (սրուն զայտնեան կը հաւատար թէի, բայց սրուն ս՞վ և ուրանէ ըլլալը չէր կրնար սրուչի) պաշտելու անսանձելի փափաքին քովի ի վեր անեցած է սէրը արուեստին, պաշտամունքի չափ հզօր, սր ուրիշ բան չէ եթէ ոչ սէրը զկիցինին, սէրը ներգաշնակութեան ու կաստրիւթեան: Աւ տելին: Արտեհոսի հզօրակայն արտայայտութիւններէն մին եկազ երգավ փարձած է օրհնաբանի իր գաւառած Արտրիչը: Գաւիթ մարգարէի օրով, իսրայէլացիք ոչ միայն հոգեսոր երգերով՝ այլև պարերավ գիմաւարիցին գիրութենէ վերագարձով Աւխտին Տապանակը: ԶԱսաւած պաշտելու համար յօրինուած արուեստի իրազութումներուն մէջ կը ցոլանայ կրօնազգած սպին նայն այդ ժողովուրդներուն, զանոնք երկնոզ սիրունդներուն:

Եթէ ազօթքը մեզ կը վերցնէ ու կը մօտեցնէ Գիրազոյն էտկին, արսեհոսին մոգական ոյժը ևս ունի յատկութիւնը միզ վերցնելու երկրաքարչ սասրնութիւններէն ու փախազքելու ներքին վայելքի այնպիսի մթնուարտի մը մէջ՝ ուր մեր շուրջի հաստակ իրերն ու ամէն կարգի ճղճիմութիւններէն, կ'ոյլավագութիւններէն և ապահով հազարութ մէկ խեղճութիւններէն, զուհնկութիւններէն, ճղճիմութիւններէն, բացաւելու համար երկնույթին իսկութիւններուն ու անոնց ճառագայթով անհուազ ու անսահման հրանութեան, յաճախ հոգանելի ու յարածամ բաղձացուած կատարելուրեան:

Հին տուած ու նիւթով միայն պայմանաւոր այն միւս վայելքէն, հշտախաւոր համայքէն՝ սր ժամանակաւոր է, վաղանցաւկ ու մանաւանդ անկատար: Զուր տեղը չէ սր բանասահզնութիւնը քրաներու մսպութիւնը անուանաւոր է Անգլիացիներէն: Սակայն մէծ ու ազնիւ հոգիներուն միայն արուած է հաղորդակից դասնաւալ այդ վայելքին, այդ Ճշմարիտ երանութեան:

Եթէ իրաւ արուեստը կոչումն ունի նոմե ազնւացնելու մեր հոգիները, արուեստագէտը ո՛րքան աւելի ազնաւուկան նկարագրի աէք մէկը ըլլալու է, սրպէսպի ի՞ր իսկ հոգիէն բզիսած և թանձրացնալ կերպարանքով յայտնաւող արուեստի գարձ մը յաջողի իր այդ վահմ առաքելութեանը մէջ: Ձիչդ ինչպէս Աստուծոյ խօսքերուն մէջ ծրաբուած անհուազ ճշմարտութիւնները զանցուածներուն փոխանցելու կաշուած քարոզիչը սրբառ կամ արարու կառչած պէտք է ըլլայ այդ սկզբանքներուն: Իր խօսքը ընծացիլու հոմար աւելի ապաւորիչ և օգտակար:

Արտեհոսագէտը այն անձն է սր, որշմարիտ ազօթաւուրին նմուն, կ'ունենայ վերցուամի վհնացումի (sublimation), ներչնչումի պահի, մատոքանչացումի (ex-tase), մատյափշտակութեան վիճակներ, սրոնց սակայն իր մարքին հնա ու անկէ տուաջ իր սրաին աւ մատնակցութիւնը պէտք է ըլլայ էտկոն ու զերանչիս, պահի ուր մարդ ինքինը կը զգայ աշխարհութ մէկ խեղճութիւններէն, զուհնկութիւններէն, ճղճիմութիւններէն, բացաւելու համար երկնույթին իսկութիւններուն ու անոնց ճառագայթով անհուազ ու անսահման հրանութեան, յաճախ հոգանելի ու յարածամ բաղձացուած կատարելուրեան:

Բոււած է թէ չարերը երգ չունին: Աւ սիստ պիտի չըլլալը այս սահմանաւոր ընդգործակիւ, զայն պատշաճեցնելու համար նոմե միւս բոլոր արուեստաներուն Զարերը չսւնին արաւեստի վայելքումին հազարդ ու սահզագործակիւնը ասակ հոգի Անսունց հոգիները, ծանրացած բազմապիսի մեղքերով, նայիլ վիտան աշխարհին միայն: Զարը երկրային, անձնահամար կիր-

